ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
պատմական գիտ. թեկնածու

ԵՒՍ ՄԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՆՎԻՐԱԳԻՐ Ս. ՀՌԻՓՍԻՄԵԻ ՎԱՆՔԻՑ

Ս. Հռիփսիմեի վանքի բազմաթիվ վիմագրերի շարքում աչքի է ընկնում տաճարի արեւմտյան մուտքի բարավորի՝ մինչ օրս ուշադրության չարժանացած արձանագրությունը: Այն տեղ-տեղ եղծված է, սակայն անեղծ բառերի օգնությամբ հնարավոր եղավ ընթերցել: Արձանագրությունը, որ մոտ 5 մ բարձրության վրա է, վատ պահպանվածության պատճառով ընդօրինակեցինք շոշափելով ու հնարավորին չափ մաքրելով[1]: Ըստ էության այն եղել է սվաղի շերտի տակ եւ բացվել է Վազգեն Ա. (1955-1994) Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրոք՝ վանքում տարվող նորոգման ու բարեկարգման աշխատանքների ժամանակ: Դրանով է պայմանավորվում վիմագրի՝ մինչ օրս անհայտ մնալու հանգամանքը: Ս. Հռիփսիմեի վանքի վերաբերյալ առկա գրականության էջերում. այս արձանագրությունը կամ նրա մասին որեւէ տեղեկություն մեզ չի հասել: Անգամ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ վիմագիրը չի ընդօրինակվել անմխիթար վիճակում լինելու պատճառով, ապա գոնե տեղագիրները (Հովհ. Շահխաթունյանց, Ղ. Ալիշան, Ա. Մխիթարյանց եւ այլք) կակնարկեին վերջինիս գոյության մասին: Մինչ արձանագրությանն անցնելը հարկ ենք համարում նշել Ս. Հռիփսիմեի վանքում՝ տարբեր տարիներին տարվող վերանորոգումների վերաբերյալ որոշ տեղեկություններ, որոնք կարող են ինչոր կերպ ծառայել խնդրի լուծմանը:

Ս. Հռիփսիմե կույսի նահատակման վայրում Սահակ Ա. Պարթեւ (387-436) Կաթողիկոսի հիմնած «անշուք ու մթին» վկայարանի տեղում 618 թ. Կոմիտաս Ա. Աղցեցի (615-628) Կաթողիկոսի կառուցած տաճարի նորոգչական ու բարեկարգման աշխատանքների վերաբերյալ մինչեւ ԺԷ. դարը որեւէ տեղեկություն չի պահպանվել: Միայն ԺԷ. դարի պատմիչ Առաքել Դավրիժեցին, նկարագրելով տաճարի անմխիթար վիճակը, գրում է, որ Փիլիպպոս Ա. Աղբակեցի (1633-1655) Կաթողիկոսը, ի թիվս իր օրոք կատարած մի շարք եկեղեցաշինական աշխատանքների, ծավալեց նորոգման ու բարեկարգման գործունեություն նաեւ այս վանքում. «...զի յարտաքուստ կուսէ եկեղեցւոյն գլուխ կաթուղիկէին, եւ տանիքն բովանդակ, եւ երեսք որմոցն եւ յատակք նորին. իսկ ի ներսի կողմանէ բեմն, եւ սալարկ յատակն, եւ չորից խորանաց մէջն, այս ամենայն զոր յիշեցի, աւերեալ

1 Արձանագրության ընդօրինակման գործում մեզ աջակցեց վիմագրագետ, պ.գ.թ. Գագիկ Սարգսյանը. հայտնում ենք մեր շնորհակալությունը:

եւ քայքայեալ էր. վասն որոյ բազում ջանիւ եւ յոքնակի աշխատութեամբ, գուն գործեալ մինչեւ զամենայն նորոգեալ կատարեցին, եւ ի վերայ զգաթան եկեղեցւոյն կառուցին զնշան տէրունական խաչին»[2]: Հետագայում վանքում նորոգչական ու կառուցողական աշխատանքներ են կատարվել նաեւ Կաթողիկոսներ Եղիազար Ա. Այնթապցու (1681-1691), Սիմեոն Ա. Երեւանցու (1763-1780), Ղուկաս Ա. Կարնեցու (1780-1799), Մկրտիչ Ա. Վանեցու (Խրիմյան Հայրիկ) (1892-1907) եւ այլոց գահակալման տարիներին: Հայտնի է, որ Խրիմյան Հայրիկի օրոք՝ 1898 թ., Ս. Հռիփսիմեի տաճարում կատարվող նորոգումների ժամանակ՝ Ավագ սեղանի եւնամասում, որմերի ծեփից բացվել է Կոմիտաս Կաթողիկոսի երկրորդ արձանագրությունը[3], ինչպես նաեւ Ավագ սեղանի աջակողմյան որմին՝ աստիճաններից վեր փորագրված 1296 թվականը կրող արտոնագիրը: Խոսելով հատկապես Կոմիտաս Կաթողիկոսի երկրորդ արձանագրության մասին՝ Գարեգին Հովսեփյանը նշում է, որ այն անեղծ է, միայն մի քանի տեղեր ծեփը մաքրելիս վարպետների անզգուշության պատճառով փոքր-ինչ վնասվել է[4]: Գ. Հովսեփյանը ոչինչ չի նշում սույն հոդվածի խնդրո առարկա արձանագրության մասին, ուստի կարելի է ենթադրել, որ այն բացվել է ավելի ուշ, քանզի դժվար թե աննկատ մնար նրա կողմից: Ի տարբերություն նախորդ արձանագրությունների՝ խնդրո առարկա վիմագրի տառերի փորվածքներում մասնակիորեն պահպանվել են սվաղի, ծեփի մնացորդները, եւ այս արձանագրությունը որոշակիորեն վնասվել է մաքրման ժամանակ:

Ս. Հռիփսիմեի տաճարի վերանորոգման աշխատանքներն ընթացք են ստանում նաեւ 1936, ապա 1945 թվականներին: Այս տարիներին է Հայաստանի հուշարձանների պահպանության կոմիտեի որոշմամբ ամրացվում են տաճարի հիմքերը, ապա նորոգվում են գետնախարիսխները, տանիքը, գմբեթը, պարիսպները, հարակից շենքերն ու բակը: Այդուհանդերձ, Ս. Հռիփսիմեի տաճարում հիմնական վերանորոգումներն սկսվում են 1955 թվականից, այսինքն՝ Վազգեն Ա. երջանկահիշատակ Հայրապետի գահակալման առաջին իսկ տարվանից: Նպատակ ունենալով վերականգնել տաճարի հնամենի տեսքը՝ Հայրապետի անմիջական համաձայնությամբ որոշվում է նախ հեռացնել ԺԹ. դարի վերջում արված շինության ներսի որմերի ծեփը, որը միայն խաթարում էր տաճարի հնամյա տեսքը: 1958 թ. մայիսին, ճարտարապետ Հրանտ Հակոբյանի ղեկավարությամբ սկսվում են ծեփի մաքրման աշխատանքները՝ կրաջրի հետքերի վերացման համար կիրառելով նաեւ ավազաշիթ մեքենա[5]: Աշխատանքներն անցնում են բարեհաջող՝

2 **Առաքել Դաւրիժեցի,** Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ Լ. Ա. Խանլարյանի, Երեւան, 1990, էջ 268:

3 Կոմիտաս Կաթողիկոսի առաջին արձանագրությունը, որ ավելի ծավալուն է, փորագրված է տաճարի արեւմտյան պատին՝ արտաքուստ: Արձանագրությունը տեսանելիության առումով անմատչելի տեղում է, քանի որ հետագայում կառուցված զանգակատունը գրեթե ամբողջովին ծածկում է այն:

4 **Գարեգին վարդ. Յովսէփեան,** Կոմիտաս կաթուղիկոսի մի նոր արձանագրութիւն. «Արարատ», 1898, հոկտեմբեր, էջ 441:

5 **Վ. Հարությունյան,** Պատմություն Ս. Էջմիածնի Մայր Աթոռի շինարարական գործունեության Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի գահակալության օրոք (1956-1980). «Վերանորոգման եւ բարեփոխման աշխատանքներ Ս. Հռիփսիմեի եկեղեցում». «Էջմիածին», 1984, Գ., էջ 33, նաեւ **Է. Մելիքյան,** Հռիփսիմե տաճարի վերակառուցումների բնույթը. «Գիտություն եւ տեխնիկա», 1978, թ. 4 (176), էջ 22:

փալով գիտությանը անհրաժեշտ արդյունքներ: Դրանց մասին հետագայում պրոֆ. Վ. Հարությունյանը գրում է, որ բացի նրանից, որ ծեփի հեռացման արդյունքում բացվեց տաճարի հնամյա տեսքը գորշավուն տուֆ քարի իր բնական երանգներով, «...գմբեթի ներքին սֆերիկ մակերեւույթի վրա բացվեցին վարպետների բազում նշաններ[6], որոնց համեմատումը տաճարի արտաքին նշանների հետ միանգամայն համոզում է, որ դրանք հիմնականում նման են միմյանց, այսինքն գմբեթի ներքին սֆերայի շարվածքը նախնական է, անեղծ, այսինքն՝ վերանորոգման չի ենթարկվել...», ինչպես նաեւ բացվեցին գմբեթապակ չորս անկյուններում առկա հովհարաձեւ տրոմպները[7]: Ցավոք, Վ. Հարությունյանն այսքանով եզրափակում է ծեփից բացված նորույթների թվարկումը՝ ոչինչ չասելով մեզ հուզող արձանագրության մասին:

Բարեբախտաբար, հարցը լուծվում է վերանորոգման աշխատանքները ղեկավարող, ճարտարապետ Հր. Հակոբյանի մի հոդվածում տեղ գտած տեղեկատվությամբ, որ հրատարակվել է հեղինակի մահից տարիներ անց: Այն, որ Ս. Հռիփսիմեի խնդրո առարկա նվիրագիրը եւս բացվել է վերոնշյալ նորոգման ժամանակ՝ որմերի ծեփը մաքրելիս, հավաստում է ճարտարապետը: Թեպետ համառոտ, բայց նա նշում է, որ ի թիվս ճարտարապետական տեսանկյունից ուշագրավ բացահայտումների՝ «... բացվեցին նաեւ երեք արձանագրություն եւ մի քանի ծածկագիր հիշեցնող արձանագրություններ:

ա. Արեւելյան աբսիդի կենտրոնական եւ հարավային լուսամուտների տակ՝ երկու քարի վրա անկանոն գրված: Գրված լինելով տուֆ քարի վրա, որը մինչեւ ծեփելը խիստ հողմահարված է եղել եւ ծեփելուց հետո որոշ չափով վնասվել, արձանագրությունը ներկայումս գրեթե անընթեռնելի է:

բ. Երկու արձանագրություն արեւմտյան կենտրոնական մուտքի վրա՝ կամարի եւ լուսերի ներսի (տիմպանի) քարի վրա: Դա մի նվիրատվական արձանագրություն է: Մուտքի բարավորի վրա քանդակված խաչի կողքերում եղած արձանագրությունը նույնպես գրված է անկանոն եւ դժվար ընթեռնելի է»[8]: Արեւմտյան դռան վերին մասի երկու արձանագրություններ ասելով նկատի է առնվում խնդրո առարկա նվիրագիրը, պարզապես Հր. Հակոբյանը բարավորի կամարին փորագրված թվականն ընդունել է իբրեւ առանձին վիմագիր, մինչդեռ այն վերաբերում է միեւնույն արձանագրությանը:

Կատարված աշխատանքներն ունեին նաեւ ճարտարապետական նշանակություն: Ծեփի հեռացումը պարզեց, որ պատերի, աբսիդների, մույթերի ստորին մասերը, ինչ-

6 Ծեփից բացված քարերի վրա առկա վարպետների նշանները, որ հիմնականում կորագծեր են, խաչեր, աստղանիշեր, առանձին տառեր ու կցագրեր, ճարտարապետ Հր. Հակոբյանը դասակարգում է ըստ տեղանքի՝ ներսի ցածր մասերում, ճակատներին եւ գմբեթի վրա՝ ներքուստ: Հատկապես ուշագրավ են գմբեթի վրա բավականին տարածված «ՍՄ», «Տ», «ՍՊ», «ՍՐ» կրճատ գրերը, որոնք, հավանաբար, ճարտարապետի, քարգործ վարպետների անվան սկզբնատառերն են կամ հապավված ձեւերը: **Հրանտ Հակոբյան,** Նորահայտ նյութեր Հռիփսիմեի տաճարի վերաբերյալ. «Հայկական արվեստ», թ. 1, Հին եւ միջին դարեր, ծանոթագրությունը Յու. Թամանյանի, Երեւան, 1974, էջ 52:

7 **Վ. Հարությունյան,** անդ, էջ 34:

8 **Հր. Հակոբյան,** անդ, էջ 52, ենթադրելի է, որ ճարտարապետը փորձել է ընթերցել արձանագրությունը եւ հոդվածում նշել է բովանդակության նվիրատվական բնույթը եւ ոչ ավելին:

Ս. Հռիփսիմե վանքի արևմտյան մուտքի բարավորի արձանագրությունը

Նկ.1

պես նաև կիսակլոր խորշերի պրոմպային անցումները վերանորոգման կարիք ունեն[9]: Տաճարի ներսում՝ հյուսիսարևմտյան մույթի վրա, մոտ 1 քմ մակերեսով պահպանվել է նախկին ծեփը՝ մոտ 1.5 սմ հաստությամբ (նկ. 1): Պարզվում է, որ տաճարի արեւմտյան խորանում, ձախ պատին հենած ԺԲ.-ԺԳ. դարերին բնորոշ եւ իր տեսակով եզակի խաչքարը նախկինում դրված է եղել հիշյալ տեղում եւ միայն երեք տարի առաջ է տեղափոխվել: Հավանաբար ծանրության պատճառով խաչքարը չեն տեղափոխել նորոգման ժամանակ եւ քարի հենման հատվածում ծեփը մնացել է: Ուշագրավ է ծեփին պահպանված սեւ թանաքով գրությունը. «1931 թ. սեպ. 29-ին, Լեվօն Սուճիեանց»: Հավանաբար, հիշյալ գիրը վերաբերում է խաչքարը Վաղարշապատ տեղափոխելուն, այսինքն՝ Արեւմտյան Հայաստանից այն բերել է 1931 թ. սեպտեմբերի 29-ին Լեւոն Սուճիյանցը:

Դառնալով արձանագրությանը նշենք, որ թվականը փորագրված է բարավորի ձախակողմյան կամարաձեւ քարին, իսկ բուն արձանագրությունը՝ բարավորին, ինը տողից.

Գրչագիր 1.

Ի ԹՎԻՍ ՉԾԱ. (1302)/ ՅՈՒՍՈՎ ԱՆՄԱՀԻՆ, ԱՅ Ե[Ի] ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԻՄ
ՊԱՐՈՆԱՑՆ ՃԱՀԸՆՃԱՀԻ Ե[Ի] ԻՐ/ ԵՂԲԱՐՑՆ. ԵՍ ՍԱՐԳԻՍ ՄՈՆԹՍ ԿՈՇԵՑԻ.
ՄԻԱԲԱՆԵՑԱ/ ՍԲ ՀՌԻՓՍԻՄԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՑՍ Ե[Ի] ԹՈՂԻ ՔԻՄ ՀԱԼԱԼ
ՊԱՐՏՔՆ :Ռ: (1000) ՍՊԻՏԱԿ, ՈՐ ՅԻՄ ՑԵՏ Ե[Ի] ...ԱՅԼ ՈՉ ՈՒՄ ԳՐԱՒ ՉԿԱՑ
Վ[Ե]Տ ՍԱ[Ի]ՑԱ. ՈՉ ՄԵԾ[ԱՑ] Ե[Ի] ՈՉ ՓՈՔԵՐ. Ե[Ի] ՍՈՔԱ Ժ[Ա]ՄԱՆԱԿՔ Ե[Ի]
ՏԱՆՈՒՏԵՐՔ ԱՒՏՐԵՆ, ՅԱՄԷՆ ՏԱՐԻ :Գ: (3) ՊԱՏԱՐԱԳ ԱՆԵՆ ՅԱՅ/ՏՆՈՒԹԷ[Ի] ԱՆ[Ի]՝
:Ա: (1) ԻՆՁ, :Ա: (1) ԹԱԾԵՐԻՆ, :Ա: (1) ԱՋԱ[Տ]Ր[Ի]ԵՆԱ, ԿԱՏԱՐԻ/Չ ԳՐՈՑՍ ԱԻՐՀՆԻՆ
ՅԱԾ ԵՒ ԽԱՓԱՆՈՂՔՆ ԴԱՏԻ Ի ՏԷ:

Նկ. 2 ա, բ

Վիմագրում հիշվող նվիրատուն Սարգիս մոնթ Կոշեցին է, որ Հայոց ՉԾԱ. (1302) թվականին Ս. Հռիփսիմեի վանքին է ընծայում հազար սպիտակ, այսինքն՝ արծաթե

9 Տե՛ս **Յու. Թ-ամանյան,** Հուշարձանների նոր կյանք, Երեւան, 1988, էջ 83:

դրամ: Ուշագրավ է, որ նվիրատվությունը կատարվել է ոչ թե վիմագրերում լայնորեն տարածված «ՍԲ ուիտին» կամ «ՍԲ եկեղեցոյս», այլ «ՍԲ ՀՌԻՓՍԻՄԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՅՍ», որ, հավանաբար, այսպես է կոչվում տաճարի՝ Ս. Հռիփսիմեի նահատակման տեղում կառուցված լինելու պատճառով, որտեղ եւ ամփոփված են Սուրբ կույսի նշխարները:

Վիմագրում հստակ նշվում է, որ նվիրաբերած դրամն իրավունք չունեն օտարել ո՛չ մեծերը, ո՛չ փոքրերը, ո՛չ վանքի քահանաները եւ ո՛չ տանուտերերը, այսինքն՝ այն անձեռնմխելի է: Այս երեւույթը տարածված է եղել նվիրագրերում, քանի որ դրանք բաշխվել են նվիրաբերողի ցանկության համաձայն եւ անցնելով նոր տիրոջը (տվյալ դեպքում հոգեւոր հաստատությանը - Ա. Հ.) համարվել են անձեռնմխելի[10]: Այն, որ եկեղեցուն կամ վանական հաստատությանն արված նվիրատվությունը ոչ ոք իրավունք չունի սեփականելու, այսինքն նվիրաբերվող օբյեկտից օտարելու, նշվում է նաեւ Մխիթար Գոշի Դատաստանագրքի «Յաղագս դատաստանաց նուիրաց յեկեղեցի հող, կամ ջուր, կամ այգի, կամ այլ ինչ այսպիսի» հոդվածում: Ըստ այդմ, ընծայած գույքը կարող են միայն նախկին նվիրատուները վերստին նվիրել մեկ այլ հաստատության՝ առաջինի քանդված լինելու եւ չվերակառուցելու դեպքում. «Եթէ պատահի աւեր եկեղեցւոյն, յոր նուէրն եղեւ, թէ ի վանս, թէ ի գեղջ, եւ աշխարհականք բնակելով առցեն եւ կերիցեն, իշխանք լիցին նուիրողքն առնուլ եւ յայլ եկեղեցիս նուիրել, թէ չիցէ կարծիս շինութեան, ապա թէ իցէ՝ ինքեանց հոգեւորապէս մատակարարիցեն, մինչեւ շինիցի, եւ ապա անդրէն հաստատիցեն...»[11]: Գոշը նշում է նաեւ, որ տեղի կրոնավորներն իրավունք ունեն կալվածները տնօրինել սեփականության իրավունքով՝ ստացված եկամուտները տրամադրելով տվյալ շինության վերակառուցմանը. «Այլ թէ պատահի զաւերեալ եկեղեցւոյ զժողովուրդ առնուլ այլ եկեղեցի, յորժամ շինիցի՝ առանց ամենայն հակառակութեան անդրէն հաստատեսցէ եպիսկոպոսն»[12]: Նկատենք, որ Ս. Հռիփսիմեի վերոնշյալ նվիրագրով արգելվում էր ընծայած դրամն օտարել կամ գրավ դնել անգամ քահանաներին:

Սարգիս Կոշեցու՝ Ս. Հռիփսիմեի վանքին իբրեւ անձեռնմխելի գույք նվիրաբերած հազար սպիտակը կարելի է նույնացնել վիմագրերում բազմիցս հիշատակվող ունեցվածքի, կալվածքի տնօրինման մի գործառույթի հետ, որ ընդունված է կոչել «վախմ» կամ «վակֆ»: Հր. Աճառյանը «վախմ»-ը մեկնաբանում է «իբրեւ բարեպաշտական նուէր եկեղեցուն կտրակուած հող կամ կալուած», որի նախնական գործածության հանդիպում է Սանահնի վանքի 1183 թ. մի վիմագրում[13]: Բառը գրվում է զանազան ձեւերով՝ ոխֆ,

10 Տես **Գ.Ռ. Մ. Գրիգորյան,** Սյունիքի վանական կալվածատիրությունը IX-XIII դարերում, Երեւան, 1973, էջ 70:

11 **Մխիթար Գոշ,** Գիրք դատաստանի, աշխատասիրությամբ՝ Խոսրով Թորոսյանի, Երեւան, 1975, էջ 147:

12 Անդ, էջ 147:

13 Կ. Դաֆադարյանն այս վիմագիրը ներկայացնում է այն արձանագրությունների կազմում, որոնք տեղում չի տեսել եւ մեջբերում է նախկին հրատարակություններից, ըստ որոնց այն փորագրված է եղել Ամենափրկիչ եկեղեցու մուտքի ճակատին: Ըստ վիմագրի՝ Օրբելյան Իվանե սպասալարը, վրաց Գեորգի թագավորի օրոք, ուխտի է գալիս Սանահնի վանքի Ս. Աստվածածին եկեղեցի, ուր այդ շրջանում առաջնորդ էր Գրիգոր Տուտեորդի եպիսկոպոսը եւ «...տեսի զյիշատակս նախնեաց մերոց, որ մեր ամենայն գաւառքն՝ թէ՛ քաղաք եւ թէ՛ գիւղք, ազատօք եւ շինականօք յերանելի թագաւորաց եւ ի նախնեաց մերոց վախմ էր տուած սուրբ

ոիով, ոիս, ոիտ, ոդչ, ոդճ եւ այլն: Այս տերմինն ունի արաբական ծագում՝ նույնանալով «վակֆ»-ի (vaqf) հետ[14], որ բովանդակում է վաճառքն արգելված կալվածքը կամ ունեցվածքը, որն իր ձեռքին ունեցողը կարող էր միայն օգտվել դրա հասույթից, այլ ոչ երբեք օտարել: Անդրադառնալով բառիս քննությանը՝ Ա. Տեր-Ղեւոնդյանը գրում է. «Վակֆ են կոչվում այն հողերը, որոնք բարեգործական նպատակներով առհավետ նվիրված են մահմեդական կրոնական հաստատություններին: Վակֆ էին համարվում նաեւ քրիստոնեական վանքապատկան կալվածները: Խալիֆայության ժամանակ վակֆ էին համարվում նաեւ այն հողերը, որոնք խալիֆայության կողմից բռնի կամ պայմանագրով վերցված էին նախկին տերերի ձեռքից, այն պայմանով, որ վերջիններս մնալով իրենց հողերի վրա, օգտագործեն այն վճարելով հողահարկ (խարաջ)»[15]: Մշակովի այն հողերը, որոնք անցնում էին կրոնական հաստատություններին, Բ. Առաքելյանն անվանում է վակուֆային հողեր: Նման հողեր կային բոլոր այն վայրերում, ուր գտնվում էին մզկիթներ եւ կրոնական հաստատություններ: Վակուֆը մի երեւույթ էր, որը տնօրինող հոգեւորականի կամ կրոնական հաստատության եկամուտները գոյանում էին այդ տիրույթների վրա աշխատող բնակչության հարկերով[16]: Բերենք վիմագրերում «վախմ»-ի հիշատակմամբ մի քանի օրինակներ: Այսպես, ըստ Սանահնի վանքի գրատան նախագավթի պատուհաններից մեկի վերին մասի վիմագրի՝ ոմն Սարգիս միաբանելով Ս. Աստվածածին եկեղեցուն. «...էտու :Ծ: (50) սպիտակ, :Ա: (1) շ[ուլ]ջառ: Վարդապետս՝ Աւէտիս եւ միաբանքս հաստատեցին ինձ :Գ: (3) պատարագ ի տաւնի Դաւթի եւ Յակոբ անխափան»[17], Ստեփանակերտի Պտկի Ս. Գեւորգ եկեղեցու հարավարեւմտյան սյան վրա կարդում ենք, որ ոմն Ղուկաս վարդապետ, շինելով մեկ ջաղաց (ճաղաց) «...դվի վախմ ՍԲ ուիդիս Գեւերգա ի փրկութիւն հոգոյ իմոյ...»[18], կամ ըստ Մեծ Բանանց գյուղի եկեղեցու զանգակատան հյուսիսարեւելյան մույթի արձանագրության՝ «Ես Պաղտասարի որդի մահտեսի Նէրսէս եւ Օսէփս տվինք ՍԲ Անապատիս:Ա: (1) թուման վախմ, սոքա տվին մեզ տարէն :Դ: (4) ժամ...»[19]: Վիմագրերում սակավաթիվ են դրամն իբրեւ վախմ անելու վկայությունները, այդուհանդերձ, կարծում ենք, հիշյալ նվիրագիրն այդ օրինակներից մեկն է:

Սարգիսը վիմագրում հիշվում է որպես կոշեցի: Կոշ անունով գյուղեր են հիշատակվում Էրզրումի նահանգի Բաբերդի գավառում՝ Ճորոխ գետի հովտում, Ղազախի գավառում՝ Իջեւան քաղաքի մերձակայքում, որ Գոշ է կոչվում, ինչպես նաեւ ներկայիս Արագածոտնի մարզում, որ հնում կոչվել է Կոշ (Կուշ) եւ մտել է Մեծ Հայքի Այրարատ

Աստուածածնիս, եւ նզովիք փակած. մեք ես նախնեաց մերոց հերեւելով մեր ամենայն գաւառքն քաղաքաւք, գիւղիւք, ազատաւք եւ շինականաւք վերստին վախմ տաւք սուրբ Աստուածածնիս...» (ընդգծումները մերն են - Ա. Հ.): **Կ. Ղաֆադարյան,** Սանահնի վանքը եւ նրա արձանագրությունները, Երեւան, 1957, էջ 189, արձ. 184: Հմմտ.. «Վիմական տարեգիր», կազմեց՝ Կ. Կոստանեանց, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 35:

14 Տե՛ս **Հր. Աճառյան,** Հայերեն արմատական բառարան, Դ. հատոր, Երեւան, 1979, էջ 295:

15 Արաբական աղբյուրներ, Բ., Իբն Ալ-Ասիր, թարգմանություն բնագրից, առաջաբան եւ ծանոթագրություններ Արամ Տեր-Ղեւոնդյանի, Երեւան, 1981, էջ 380, ծնթ. 143:

16 Տե՛ս **Բ. Ն. Առաքելյան,** Քաղաքները եւ արհեստները Հայաստանում IX-XIII դարերում, հ. 2, Երեւան, 1964, էջ 270-271:

17 **Կ. Ղաֆադարյան,** Անդ, էջ 164-165, արձ. 131:

18 «Դիվան հայ վիմագրության», պր. V, կազմեց՝ Ս. Գ. Բարխուդարյան, Երեւան, 1982, էջ 138, արձ. 460:

19 Անդ, էջ 264, արձ. 1021: (Ընդգծումը՝Ա. Հ.):

նահանգի Արագածոտն գավառի մեջ, ուր ըստ ավանդության՝ բնակություն է հաստատել բիբլիական Քանանի որդի Քուշը, որի անվան աղավաղումից էլ առաջացել է Կվաշ անունը[20]: Սարգիսը, որ հավանաբար, Այրարատ նահանգի Կոշ գյուղից է, վիմագրում իրեն մոնթ է կոչում, որ նշանակում է վանական դպրոցի աշակերտ, պատանի, տիրացու, որ սպասավորում կամ աշակերտում է որեւէ վարդապետի[21]: Կարծում ենք՝ Սարգսի հովանավորչական ամուր դիրքի մասին է խոսում վիմագրի՝ «ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԻՄ ՊԱՐՈՆԱՑՆ ՇԱՀԸՆԾԱՀԻ ԵՒ ԻՐ ԵՂԲԱՐՑՆ...» արտահայտությունը, որից կարելի է եզրակացնել, որ Զաքարյան իշխանների հովանավորությունը վայելող մեկն է եղել Սարգիսը եւ վերջիններիս բարեհաճությամբ Ս. Հռիփսիմեի վանքին է հատկացրել նշյալ քանակությամբ դրամ ու պատիվ ունեցել արձանագրությունը թողնելու տաճարի գլխավոր մուտքի բարավորին:

Վիմագրերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ բացի հոգեւոր կառույցներին տրվող անշարժ ու շարժական գույքից, հատկապես Թ.-ԺԳ. դարերում մեծ են եղել նաեւ դրամական նվիրատվությունները, որի դիմաց նվիրատուները պատարագներ են ստացել եկեղեցական տարբեր տոներին: Պատարագների դիմաց նվիրաբերվել են հիմնականում քսանական դահեկան կամ դեկան: Բազմաթիվ են նաեւ արծաթ դրամների նվիրաբերման վկայությունները, որոնցից մեկը քնվող նվիրագիրն է: Դրանք կոչվել են նաեւ սպիտակ, դեկան, ստակ, դուկատ, սպիտակ սուլտանի, իսկ հետագայում՝ նաեւ թուման[22]:

Դրամական նվիրատվությունները մեծ մասամբ ուղեկցվել են «հալալ ինչք», «հալալ արդիւնք», «հոգոյ բաժին», «արդար ինչք», «հոգո պահուստ» եւ այլ արտահայտություններով[23], իսկ խնդրո առարկա վիմագրում այն պարզապես կոչվում է «ՀԱԼԱԼ ՊԱՐՏՔ», որը եզակի է իր տեսակում եւ կարելի է մեկնաբանել նվիրատուի կողմից իր իսկ ջանքերով, «հալալ քրտինքով» վաստակած դրամ, որն իբրեւ հոգու պարտք, հոգու բաժին նվիրաբերվում է տվյալ հոգեւոր հաստատությանը:

Համաձայն վիմագրի՝ նվիրատվության դիմաց Սարգիսն ստանալու է տարեկան երեք պատարագ Հայտնության տոնին՝ մեկն իր, մեկը Թաճերին, իսկ մյուսը՝ Ազատկենին: Այն, որ նվիրատվությունների դիմաց հատկացվող պատարագները սահմանվում էին հիմնականում եկեղեցական տոն օրերին, վկայում է նաեւ հիշյալ արձանագրությունը: Այստեղ պատարագը հատկացվում է Հայտնության տոնին, որ նույն Աստվածահայտնությունն է:

Ս. Հայտնության տոնը դասվել է այն կրոնական տոների շարքը, որոնց ժամանակ ստացված եկամուտներից բաժին ունեին նաեւ տեղի վանականները[24]:

Ինչ վերաբերում է Թաճերին, ապա նշենք, որ պարսկական ծագում ունեցող իգական այս անձնանունը հայոց մեջ առավել գործածական է եղել ԺԳ.-ԺԷ. դարերում: Հր.

20 Տե՛ս **Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան,** Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երեւան, 1991, էջ 209:

21 «Հայերէն բացատրական բառարան», կազմեց՝ Ստ. Մալխասեանց, հ. III, Երեւան, 1944, էջ 357:

22 Տե՛ս **Լ. Սարգսյան,** Հայաստանի նվիրատվական արձանագրությունները. (9-14-րդ դարեր), Երեւան, 2007, էջ 84:

23 Տե՛ս **Լ. Սարգսյան,** անդ, էջ 85:

24 **Գր. Մ. Գրիգորյան, անդ,** էջ 207:

Աճառյանը այդ դարերում գործած մի քանի «Թաճեր»-ի է հիշատակում, որոնցից է Խաչենի իշխան Պռոշի որդու՝ Ամիր-Հասանի կին, Պապաքի եղբայր Ռաքանի դուստր Թաճերը, որ Էահի մայրն է[25]: Նրանց անունները հիշատակվում են Թանահատի վանքի Ս. Ստեփանոս եկեղեցու արևմտյան մուտքի բարավորի՝Հայոց ՉԾՁ. (1307) թվականը կրող վիմագրում[26]: Վերոնշյալ անուններից մի քանիսը հիշվում են նաև նույն եկեղեցու հարավային որմի վիմագրում. Անձնանունների զուգահեռները եւ ժամանակային հարազատությունը մեր կողմից քննվող նվիրագրի հետ թույլ են տալիս երկմտելու՝ Թաճերի եւ Սարգսի վերը հիշված անձանց հետ ունեցած կապերի առումով:

«Ազատկեն»-ը հազվադեպ հանդիպող անձնանուն է, որ կարծես փոփոխված տարբերակն է ԺԳ. դարում սակավ հանդիպող «Ազատտիկին» իգական անձնանվան: Ըստ Աճառյանի՝ կազմված է ազատ+տիկին բառերից եւ մի անգամ գործածվում է ԺԳ. դարի ձեռագրերից մեկում[27]: Կարծում ենք՝ խնդրո առարկա նվիրագրում հիշատակվող «Ազատկեն»-ը Ազատտիկին անձնանվան Ազատկին - Ազատկեն ձեւափոխված տարբերակն է:

Մեր որոնումները Սարգսին նաեւ մատենագրության մեջ հիշված գտնելու ակնկալիքով հանգեցրեց նրան, որ Թեղենյաց վանքում գրված տվյալ ժամանակաշրջանի ձեռագրերից մեկի հիշատակարանում նշվում է ոմն պատանի Սարգիս դպիր, որ միգուցե միեւնույն անձն է: Նա եւս հիշվում է այն անձանց շարքում, որոնց պետք է մտաբերեն ու աղոթեն[28]:

Այսպիսով, արձանագրության համակողմանի քննությունը հուշում է, որ բացի այն, որ վիմագրում խոսքը եկեղեցական տոնի, պատարագի, դրամական նվիրատվության շուրջն է, այն նաեւ նոր լույս է սփռում Վաղարշապատի՝ տվյալ ժամանակաշրջանի աշխարհիկ ու հոգեւոր կյանքի վրա: Զարգացած միջնադարում Վաղարշապատի կրոնական հաստատությունների եւ մասնավորապես Ս. Հռիփսիմեի վանքի վերաբերյալ տեղեկությունները խիստ կցկտուր են, ինչն էլ հանգեցրել է այս վանքերի՝ անմխիթար ու ամայի վիճակում լինելու գաղափարին: Սակայն, այս եւ համաժամանակյա մի քանի վիմագրերի առկայությունը գալիս է փաստելու ճիշտ հակառակը, քանի որ նվիրատվության իրողությունը տվյալ հոգեւոր հաստատությանը, վկայում է այն, որ վանքը գործել է, ունեցել է միաբանություն ու հոգեւոր դաս, ինչպես նաեւ կարեւոր դեր խաղացել ժամանակի տնտեսական, քաղաքական ու հասարակական կյանքում: Վիմագրերում հիշատակվող դրամական նվիրատվությունների թիվը շնորհիվ Ս. Հռիփսիմեի վանքի հիշյալ նվիրագրի՝ ավելացավ եւս մեկով:

25 Տե՛ս **Հր. Աճառյան,** Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Երեւան, 1944, էջ 281:

26 «Դիվան հայ վիմագրության», պր. III, էջ 76, արձ. 209: Տե՛ս նաեւ **Ի. Գ. Դարիրյան,** Գլաձոր, Երեւան, 1983, էջ 116, արձ. 17:

27 Տե՛ս **Հր. Աճառյան,** Հայոց անձնանունների բառարան, հ. Ա., Երեւան, 1942, էջ 54:

28 Տե՛ս «ԺԴ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց՝ Լ. Ս. Խաչիկյան, Երեւան, 1950, էջ 7: